Հաստատված է

Հոգաբարձուների խորհրդի 2016թ. մարտի 25-ի թիվ 1 արձանագրային որոշմամբ

‹‹Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն›› հիմնադրամի Ռազմավարական ծրագիր 2016-2020

2016

Բովանդակություն

2010-2015 թթ. ռազմավարական ծրագրի արդյունքները 3
Մարտահրավերները և կարիքները 5
Հիմնադրամի առաքելությունը 6
Տեսլականը (2020 թ.) 7
Հիմնական նպատակները և խնդիրները 7
2016-2020 թթ. ռազմավարական գերակայությունները 8

2010-2015 թթ. ռազմավարական ծրագրի արդյունքները

‹‹Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն›› հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2010-2015 թթ. ռազմավարական ծրագիրը մշակվել է 2010 թ., երբ ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում առաջնային խնդիրը որակի մշակույթի ձևավորումն ու տարածումն էր: Մասնագիտական կրթության համակարգը միջազգային զարգացումներին համահունչ վերակազմավորելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (EHEA) ինտեգրելու նպատակ ուներ: 2008 թ. վերջին ձևավորված լինելով՝ Հիմնադրամի համար կարևոր մարտահրավերներից էին որակի ապահովման ազգային կենտրոնի՝ որպես ինստիտուտի կայացումը, ինչպես նաև մասնագիտական կրթության ոլորտի կարիքներին համապատասխան մոտեցումների և գործելակերպի խթանումը տասնամյակների պատմություն ունեցող հաստատություններում: Գտնվելով հավատարմագրման նախկին կարգի ազդեցության ներքո՝ մասնագիտական կրթական համակարգը կարիք ուներ ոչ միայն անցում կատարելու առավել գործուն կարգի, այլև գիտակցելու այդ անցման անհրաժեշտությունը: Չափազանց կարևոր էր, որ 2012 թ.-ից առավել խոշոր բուհերը կամավոր դիմեցին հավատարմագրման գործընթաց անցնելու համար՝ այդպիսով ապահովելով հավատարմագրման նոր կարգի և դրա հիմքում դրված որակի չափորոշիչների բավական ընդգրկուն ծածկույթ դրանում ներառված ուսանողների մեծ թվի առումով:

Որպես անցումային ժամանակաշրջան՝ 2010-2015 թթ. Հիմնադրամի հիմնական նպատակները և դրանց ուղղությամբ նվաճումները եղել են.

- Հիմնադրամի կարողությունների ձևավորումը,
    - ռեսուրսների ձևավորման և զարգացման արդյունքում Հիմնադրամը ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն կազմակերպելու, խորհրդատվություն տրամադրելու, վերապատրաստումներ կազմակերպելու և այլ կարողություններով կառույց է,
- որակի տարածքի ստեղծումը. ստեղծել մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին համակարգ՝ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին,
    - մշակվել և հաստատվել են չափանիշներ՝ որոնք, հիմնված լինելով համակարգի համար առաջնային խնդիրների, ինչպես նաև եվրոպական չափորոշիչների վրա, ապահովում են զարգացում և բարելավում կրթության ոլորտում՝ սահմանելով համակարգի զարգացման առաջնահերթությունները և ըստ այդմ՝ ուղղորդելով ուսումնական

հաստատություններին դեպի առաջնային խնդիրների լուծում. կարևորվել է տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացման մեխանիզմը կրթական համակարգի կառավարման մեջ, մշակվել և հաստատվել են որակի ապահովման ընթացակարգեր և համապատասխան ֆորմալ փաստաթղթային հենք, որոնց արդյունավետ օգտագործումը դրական ազդեցություն է ունեցել բուհերում որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի կայացման վրա, ապահովվել է միջազգային փորձագետների մասնակցություն հավատարմագրման գործընթացներին և մշակվել են երկլեզու ընթացակարգեր, ինչի արդյունքում որակի արտաքին ապահովման համակարգը ճանաչվում և ընդունվում է միջազգային փորձագետների կողմից, պարբերաբար իրականացվում են որակի ապահովման շահակիցների համաժողովներ և որակի ապահովման ֆորումներ,

- որակի մշակույթի ձևավորումը. աջակցել մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի մշակույթի ձևավորմանը, ինչը հանգեցնում է սովորող մշակույթի ձևավորմանը և, հետևաբար, համակարգի փոխակերպմանը,
    - Հիմնադրամը խթանել է բոլոր բուհերում որակի ներքին ապահովման կառույցների ստեղծումը կամ հզորացումը, հաստատությունների կառավարիչները պրոակտիվ ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, արդյունքում բարելավվել են բուհերի կառավարման մոտեցումները, ձևավորվել է պարբերաբար ինքնավերլուծություն իրականացնելու մշակույթ, բուհերի գործունեության տարբեր ոլորտներում կիրառվում է բենչմարքինգ, վերաարժևորվել է որակի ներքին ապահովման ստորաբաժանումների դերը, ՄՈՒՀ-երի և կրթական ծրագրերի կառավարման տիրույթում կարևորվել է առաքելությանը համապատասխանությունը, անցում է կատարվում ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցման, վերանայվում են ուսանողների գնահատման մեթոդները՝ շեշտադրելով պրակտիկ հմտությունների գնահատումը, կրթական ծրագրերում կարևորվում է հետազոտության բաղադրիչի մեծացումը,
- որակի ապահովման փորձագետների բազայի հիմնումը,
    - Հիմնադրամի փորձագիտական բազայում ընդգրկվել են մասնագետներ տարբեր պետական և ոչ պետական բուհերից, կառավարիչներ, դասախոսներ, գործատուներ և այլն, բազմաթիվ վերապատրաստումների և հանդիպումների արդյունքում ձևավորվել է փորձագետների բազա, գործում է նաև միջազգային փորձագետների բազա, որում ներգրավված են միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր մեծ փորձ ունեն ոլորտում, և այս ամենի արդյունքում՝ հաջողվել է ոչ միայն ապահովել անհրաժեշտ

փորձագետների առկայություն և նրանց նկատմամբ վստահություն, այլև ձևավորել փորձագետների կազմի հարստացման գործուն կառուցակարգեր,

- միջազգայնացումը. ստեղծել անհրաժեշտ պայմաններ Հիմնադրամի միջազգային ճանաչման համար,
    - մի շարք միջազգային որակի ապահովման կազմակերպությունների հետ կնքվել են համագործակցության հուշագրեր, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա Հիմնադրամի մի շարք ոլորտներում տեղայնացվել է միջազգային փորձը, հաստատվել են սերտ կապեր ռեգիոնալ մակարդակում, արդյունքում՝ Հիմնադրամը ոլորտում միջազգային փորձի կրողն ու տարածողն է և ճանաչվում է միջազգային և օտարերկրյա կառույցների կողմից:

Այսպիսով՝ վերոնշյալ նպատակներն ընդհանուր առմամբ հաջողվել է իրականացնել: Իհարկե, ոչ բոլոր հիմնախնդիրներն են ստացել իրենց լիարժեք լուծումները, սակայն Հիմնադրամին հաջողվել է հաղթահարել անցումային ժամանակաշրջանը՝ ներկայումս ստանալով նոր մարտահրավերներ:

Մարտահրավերները և կարիքները

Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի կայացման կարևորագույն ցուցիչը ոլորտի շահակիցների կողմից սեփական շահերի գիտակցումն է և որակի ապահովման գործընթացին մասնակից լինելու ձգտումը: Այս առումով, եթե անցումային ժամանակաշրջանում հիմնական մարտահրավերը որակի տարածքի և մշակույթի ձևավորումն էր, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը, ապա ներկայիս՝ որակի ապահովման առավելապես կայացած համակարգի պայմաններում մարտահրավերները մեծապես բխում են շահակիցների կարիքներից: Գիտակցելով մասնագիտական կրթության որակի ապահովման կարևորությունը և Հիմնադրամի դերը՝ ոլորտի շահակիցները դարձել են Հիմնադրամի ակտիվ շահակիցներ: Դրան նպաստել են նաև Հիմնադրամի աշխատանքները շահակիցների տարբեր խմբերի հետ, որոնց ընթացքում բացահայտվել և արձանագրվել են նրանց կարիքները: Հիմնադրամի շահակիցների շրջանակը ներառում է դրա հիմնադրին՝ Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ կառավարության, մասնագիտական ուսումնական հաստատությունները, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, ուսանողներին և նրանց ձևավորած մարմինները, դիմորդներին և նրանց

հետ կապված շահակիցներին, շրջանավարտներին, գործատուներին, օտարերկրյա դիմորդներին և ուսանողներին, օտարերկրյա համալսարանները և գործատուներին, ինչպես նաև Հիմնադրամի աշխատակազմը:

Հաշվի առնելով շահակիցների՝ ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված կարիքները՝ ներկայիս փուլում Հիմնադրամի հիմնական մարտահրավերներից են.

- ՄՈՒՀ-երում որակի ապահովման ներքին համակարգերի կայացմանն օժանդակությունը,
- կրթական ծրագրերի որակի հավաստման լայնածավալ գործընթացի արդյունավետ կազմակերպումը և հանրային ճանաչման ապահովումը,
- մասնագիտական կրթական ծառայությունների շուկայում մրցակցության և ուսանողների շահերի պաշտպանությունը,
- տեղական ՄՈՒՀ-երի առաջխաղացումը միջազգային ասպարեզում,
- մասնագիտական կրթության որակի վերաբերյալ հավաստի տեղեկությունների թափանցիկության, տեղական և օտարերկրյա շահակիցների համար հասանելիության ապահովումը:

Ահա այս մարտահրավերներին ընդառաջ է Հիմնադրամը ձևավորում առաջիկա տարիների իր ռազմավարական զարգացման ուղղությունները:

Հիմնադրամի առաքելությունը

Հիմնադրամը խթանում է մասնագիտական կրթության չափորոշիչների ապահովումը և որակի շարունակական բարելավումը՝ նպաստելով կրթական համակարգի ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

Առաքելությունից բխող գործունեությունն իրականացնելիս Հիմնադրամը ներկայացնում է հանրության շահերը, ձգտում է բարձրացնել մասնագիտական կրթության ոլորտի կազմակերպությունների և նրանց թողարկման մրցունակությունը և առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

- Հանրային վստահություն. այն հիմնվում է ժողովրդավարական կառավարման և դրա հիմքում ընկած այն գաղափարի վրա, որ ժողովուրդն է իրական իշխանության կրողը, և նա է որոշում տվյալ հասարակության ապագան: Հիմնադրամն իր գործունեությամբ երաշխավորում է հանրության վստահությունը մասնագիտական կրթության հանդեպ:
- Սոցիալական համախմբվածություն և պատասխանատվություն. կրթության հիմնական խնդիրներից մեկը սոցիալականացումն է (այսինքն՝ ժողովրդավարական հասարակության նորմերի, արժեքների և սկզբունքների հանդեպ հարգանքի ձևավորումը), ինչը կերաշխավորի սոցիալական համախմբվածությունը: Այս առումով որակի ապահովման դերն է՝ բարձրացնել հասարակության իրազեկվածությունը որակյալ կրթություն ստանալու նրա իրավունքի վերաբերյալ, ինչը հատուկ է ժողովրդավարական հասարակություններին: Որակի ապահովման կայուն և անկախ համակարգը կպաշտպանի հասարակությանն անորակ կրթությունից՝ հանրության համար մասնագիտական կրթական ծառայությունները դարձնելով թափանցիկ:
- Հավասարություն. մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների նկատմամբ ունեցած իր մոտեցմամբ Հիմնադրամը ջանում է ապահովել հավասար հնարավորություններ հասարակության բոլոր շերտերի համար: Մասնավորապես՝ Հիմնադրամը հավասար մոտեցում է ցուցաբերում պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների հանդեպ:

Տեսլականը (2020 թ.)

Հիմնադրամը դառնալու է մասնագիտական կրթության որակի բարելավմանը նպաստող միջազգայնորեն ճանաչված և իր բոլոր շահակիցների համար վստահելի կազմակերպություն:

Հիմնական նպատակները և խնդիրները

Հիմնադրամի տեսլականից բխում են այն կազմող երեք հիմնական նպատակները.

1. Հիմնադրամի գործունեությունն զգալիորեն նպաստել է մասնագիտական կրթության որակի բարելավմանը:

2. Հիմնադրամն իր բոլոր շահակիցների համար վստահելի կազմակերպություն է:

3. Հիմնադրամը միջազգայնորեն ճանաչված կազմակերպություն է:

2016-2020 թթ. ռազմավարական գերակայությունները

Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման մարտահրավերներին և շահակիցների կարիքներին ընդառաջ՝ Հիմնադրամի ռազմավարական գերակայություններն են.

- կրթական ծրագրերի որակի հավաստման լայնածավալ գործընթացի արդյունավետ կազմակերպումը,
- Հիմնադրամի միջազգայնացումը (տարածաշրջանային և եվրոպական)՝ միտված հայաստանյան մասնագիտական կրթության միջազգային ճանաչման բարձրացմանը,
- Հիմնադրամի՝ որպես մասնագիտական կրթության ոլորտում որակի արտաքին ապահովում իրականացնող կառույցի ներուժի զարգացումը,
- նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացի մեկնարկը:

Հիմնադրամի հիմնական նպատակների իրականացումն ապահովելու համար դրանք բաժանված են ենթանպատակների և սահմանված են դրանցից բխող խնդիրները, որոնցում էլ արտացոլված են վերոնշյալ գերակայությունները: Մասնավորապես՝ 2016-2020 թթ. համար սահմանված են հետևյալ 11 ենթանպատակները և 29 խնդիրները.

1.1. Մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող կրթական ծրագրերի՝ Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հիմք են որակի հավաստման և բարելավման համար:

Խնդիր 1.1.1. Հիմնադրամի կողմից կազմակերպված փորձաքննությունների իրականացում հանրության շահերն արտացոլող չափանիշների և չափորոշիչների հիման վրա:

Խնդիր 1.1.2. ՀՀ տարածքում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի իրականացում՝ ապահովելով ուսանողների գերակշիռ մասի շահերը:

Խնդիր 1.1.3. ՀՀ տարածքում իրականացվող կրթական ծրագրերի ծրագրային հավատարմագրման գործընթացի իրականացում՝ ապահովելով ուսանողների գերակշիռ մասի շահերը:

Խնդիր 1.1.4. ՄՈՒՀ-երի այնպիսի փորձաքննության ապահովում, որ հաստատությունները որակի բարելավման իրենց գործողություններն իրականացնեն այդ գնահատումների հիման վրա՝ գիտակցելով դրանց օգտակարությունը շահակիցների համար:

Խնդիր 1.1.5. Միջին և նախնական մասնագիտական կրթության ոլորտում որակի արտաքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակում:

1.2. Մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ:

Խնդիր 1.2.1. Որակի ապահովման մեթոդաբանության տարածման նպատակով՝ Հիմնադրամի նախաձեռնությամբ պարբերական խորհրդատվությունների տրամադրում:

Խնդիր 1.2.2. Որակի ապահովման խնդիրների հաղթահարման նպատակով՝ ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ թիրախային խորհրդատվությունների տրամադրում:

1.3. Հիմնադրամն իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը:

Խնդիր 1.3.1. Թեմատիկ ուսումնասիրությունների պարբերական իրականացում և հրապարակում:

Խնդիր 1.3.2. Փորձաքննությունների հիման վրա ամփոփ տեղեկությունների և վերլուծությունների հրապարակում:

Խնդիր 1.3.3. ՄՈՒՀ-երի միջև որակի ապահովմանն առնչվող փորձի փոխանակման ապահովում:

2.1. Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հանրության կողմից ճանաչվում են՝ որպես որակն օբյեկտիվորեն արտացոլող ցուցիչներ:

Խնդիր 2.1.1. Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումների արդյունքների վերաբերյալ շահակիցների տեղեկացվածության ապահովում:

Խնդիր 2.1.2. Մասնագիտական կրթության ոլորտում հանրության կողմնորոշում՝ Հիմնադրամի գնահատումների հիման վրա:

2.2. ՄՈՒՀ-երը բավարարված են Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատման արդյունքներով՝ անկախ դրանց դրական կամ բացասական լինելուց:

Խնդիր 2.2.1. Վստահելի և ՄՈՒՀ-երի համար ընդունելի փորձագետների հասանելիության ապահովում:

Խնդիր 2.2.2. Գնահատման արդյունքների բողոքարկման վստահելի մեխանիզմի առկայության ապահովում:

2.3. Հիմնադրամն ապահովում է իր գործունեության անկախությունը:

Խնդիր 2.3.1. Գնահատումների անաչառության ապահովում:

Խնդիր 2.3.2. Հիմնադրամի ֆինանսական անկախության ապահովում:

2.4. Հիմնադրամն արդյունավետ գործունեություն իրականացնող կայուն կազմակերպություն է:

Խնդիր 2.4.1. Հիմնադրամի կառավարման համակարգի արդյունավետության ապահովում:

Խնդիր 2.4.2. Հիմնադրամի ապահովում ռեսուրսներով:

Խնդիր 2.4.3. Հիմնադրամի որակի ապահովման վստահելի ներքին համակարգի առկայության ապահովում:

3.1. Հիմնադրամն անդամակցում է միջազգային ճանաչում ապահովող կառույցներին, մասնակցում ծրագրերին:

Խնդիր 3.1.1. Հիմնադրամի միջազգային ճանաչում ապահովող կառույցներին ամդամակցության ընդլայնում:

Խնդիր 3.1.2. Որպես միջազգային կառույցների անդամ և ծրագրերի մասնակից՝ միջազգային լավագույն փորձի տեղայնացում՝ այն հասանելի դարձնելով տեղական ՄՈՒՀ-երի համար:

Խնդիր 3.1.3. Որպես միջազգային կառույցների անդամ և ծրագրերի մասնակից՝ տեղական ՄՈՒՀ-երի փորձի ներկայացում՝ դրա ստուգման, բարելավման և ճանաչման նպատակով:

3.2. Հիմնադրամն իրականացրել է ՄՈՒՀ-երի գնահատում արտերկրում և իր մատուցած ծառայությունների որակով չի զիջում նմանատիպ եվրոպական գործակալություններին:

Խնդիր 3.2.1. Ծառայությունների նկատմամբ պահանջարկի ձևավորում և օտարերկրյա ՄՈՒՀ-երի գնահատման իրականացում:

Խնդիր 3.2.2. Համատեղ գնահատումների իրականացում:

3.3. Հիմնադրամի գնահատումները ճանաչվում են օտարերկրյա դիմորդների, ՄՈՒՀ-երի, գործատուների կողմից:

Խնդիր 3.3.1. Օտարերկրյա շահակիցների համար թափանցիկ միջավայրի ձևավորում:

Խնդիր 3.3.2. Հիմնադրամի գնահատումների ճանաչում օտարերկրյա շահակիցների կողմից: